«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ.Բաբկենյանի անվան հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց պատմություն

Թեմա՝ **Անհատի իրավունքների ու ազատությունների,պատվի ու արժանապատվության պաշտպանությունը հայոց պատմության դասավանդման ընթացքում**

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝Ալլա Աբեյան

2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Մարդու իրավունքների,ազատությունների, պատվի ու արժանապատվության գաղափարի ծագումը Հայաստանում.....6

ԳԼՈՒԽ2. Մարդու իրավունքների, ազատությունների, պատվի ու արժանապատվության գաղափարի ընկալումը քրիստոնեության ընդունումից հետո:.....9

ԳԼՈՒԽ 3. Հայերի իրավունքները հայկական գաղթօջախներում 14

ԳԼՈՒԽ 4.Մարդու իրավունքների,ազատությունների,պատվի ու արժանապատվության պաշտպանությունը 1918թ-ից մինչև մեր օրերը.....17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....23

Գրականության ցանկ.....24

Ներածություն

Հայոց պատմություն դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հետապնդի մեկ նպատակ,առարկայի միջոցով ձևավորել լայն աշխարահայացք,ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող և բարձր իրավագիտակցությամբ,ազգային արժեքներով դաստիարակված քաղաքացի:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է,նրա կենսագրությունն ու հիշողությունը,դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը:Հայոց պատմության ուսումնասիրումը հիմք է յուրաքանչյուր քաղաքացու,հասարակության և պետության ապագա զարգացման: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը,պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող,ազգային արժեհամակարգը կրող անձ ու քաղաքացի:

Սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը,նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին,ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին,ինչպես նաև՝այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:Յուրացնելով Հայոց պատմության դասընթացը մենք կունենանք իրավունքի,ազատության,պատվի ու արժանապատվության վեհ գաղափարով տոգորված քաղաքացի:Պատմություն առարկայի դպրոցական դասընթացը մեծ հնարավորություններ է ընձեռում սովորողների շրջանում իրավական մշակույթի ձևավորման տեսանկյունից:Ժամանակակից շատ հայ իրավական նորմեր ծագում են հնագույն ժամանակներից և ուսումնասիրվում են պատմության դասաժամերին տնտեսական, սոցիալական, մշակութային և կրոնական իրավահարաբերությունների համատեքստում,ուստի սովորողը կարող է անցկացնել պատմահամեմատական վերլուծություն իր ապրած ժամանակների և նախորդող ժամանակաշրջանների միջև:Հայոց պատմության դասերին,ծանոթանալով պատմության մեջ տեղի ունեցած պատմական իրադարձություններին,որի արդյունքում հայ ժողովուրդը պայքարել է իր իրավունքների,պատվի,արժանապատվության ազատության համար,սովորողները կդաստիարակվեն ժողովրդավարական հասարակության համար

օրինավոր մարդ և քաղաքացի՝հիարկե հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները: Նմանատիպ յուրաքանչյուր թեմայի ուսուցման ժամանակ հիմնական նպատակ պետք է դարձնել սովորողների տրամաբանության ու ստեղծագործական մտածողության զարգացմանը :

Կարևորում եմ Հայոց պատմության դասավանդման ժամանակ կազմակերպել քննարկումներ,որոնք նպաստում են սովորողների մեջ ձևավորել իրավունքների,պատվի ու արժանապատվության իմացության կայուն հիմքեր և այդ գիտելիքները ձևավորում են նման արժեքների կիրառության կարողություններ ու հմտություններ: Մարդու իրավունքների,պատվի ու արժանապատվության ուսուցումը հնարավորություն կտա սովորողներին հաղորդակցվելու ազգային ու համամարդկային արժեքներին և կնպաստի նրանց համակողմանի զարգացմանն ու լիարժեք իրավական դաստիարակությանը:Ժողովրդավարական է այն պետությունը,որտեղ պաշտպանվում են մարդու իրավունքները,պատիվն ու արժանապատվությունը: Քանի որ պետության համար մարդու իրավունքներն անքակտելի են,ուստի հայոց պատմության դասավանդման ժամանակ անհրաժեշտ է այն ճիշտ ձևով մատուցել և արմատավորել սովորողների մեջ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել,անհատի՝սեփական հայրենիքում ազատ և արժանապատիվ ապրելու իրավունքը,ձևավորել իրավունքի, ազատության,պատվի ու արժանապատվության իմացության կայուն հիմքեր,զարգացնել տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն,խթանել ազգային ինքնագիտակցության զարգացումը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.Ուսումնասիրել հայ իրավունքի առաջացման ու զարգացման առանձնահատկությունները:

2.Բացահայտել հայ քաղաքական,հասարակական և կրոնական գործիչների դերը հայ իրավական մտածողության զարգացման գործում:

3.Կազմակերպել քննարկումներ թեմայի հետ կապված պատմական իրադարձությունների շուրջ,քննարկել անձնային իրավունքներ,ազատությունների ,պատվի ու արժանապատվության զարգացման գործընթացը հայ հասարակության բազմադարյան փորձի համատեքստում,պատմական փաստերով հաստատել սեփական հայրենիքում արժանապատիվ ապրելու իրավունքը, ներկայացնել արդի հայ իրավական համակարգի արդյունավետությունը:

Գլուխ1.Մարդու իրավունքների,ազատությունների, պատվի ու արժանապատվության գաղափարի ծագումը Հայաստանում

Իրավունքը հայ հասարակության պատմության մեջ ծագել է նույն այն պատճառների և պայմանների ուղիով ինչ որ պետությունը: Պետության և իրավունքի ծագման գործընթացները ընթացել են զուգահեռ: Միաժամանակ տարբեր ժողովուրդների մոտ, տարբեր պատմական ժամանակաշրջաններում իրավունքի ծագումը ունեցել է իր առանձնահատկությունները: Հին Հայաստանում հայերի համար օրենքը,սովորույթն էր, կանոնական կամ եկեղեցական իրավունքը.Ըստ հայ մատենագիր և օտար աղբյուրների, իրավունքի աղբյուր են եղել նաև թագավորների իրավական ակտերը: Ըստ այդ աղբյուրների հայոց թագավորները հրապատակել են հրովարտակներ,հրամաններ, օրենքներ,որոնք պարունակել են իրավական նորմեր: Սակայն ավելի գործուն դեր են խաղացել սովորութային իրավունքի նորմերը: Դա պարզորոշ կերպով արձանագրված է հին հայկական մատենագիրների մոտ,որոնք շատ հաճախ էին կիրառում «օրենք նախնեաց»,«կարգ նախնեաց» և նման այլ արտահայտություններ,որոնք ըստ էության նշանակել են սովորութային իրավունք:

Թեման ուսումնասիրելու ընթացքում անհրաժեշտ է քննարկում կազմակերպել ստրուկների դասի ոտնահարված իրավունքների ու արժանապատվության շուրջ,սովորողը պետք է հասկանա,որ ոչ-ոք չի կարող խլել անհատի՝ազատ և արժանապատիվ ապրելու իրավունքը:

Հայերի մոտ գոյություն ուներ այսպես կոչված բազմակնության սովորույթը: Սրա էությունը կայանում էր նրանում,որ օրինավոր կնոջ կողքին թույլատրելի էր նաև այլ կանայք պահելը,բայց նրանք ընդամենը հարճեր էին ու օրինավոր կնոջ աստիճանի չէին հասնում: Նրանցից ծագած սերունդը պատկանում էր օջախին,սակայն տան անդամ չէր, նա չէր կարող տունը ժառանգել: Միայն օրինավոր կնոջից առաջացած ժառանգն էր համարվում օրինական ժառնգորդ:Բազմակնության ինստիտուտը Հայաստանում պահպանվել է մինչև քրիստոնեության ընդունումը՝301 թվականը:Ամուսնությունը կատարվում էր կամ առևանգման կամ գնման միջոցով: Հին Հայաստանում առևանգման միջոցով կին ձեռք բերելը եղել է սովորական երևույթ և դրա մնացորդները դեռ մինչև 20-րդ դարի սկիզբ գոյություն ունեին հայ ժողովրդի մոտ: Առևանգման միջոցով կին ձեռք բերելը եղել է հայի համար պարծանքի պես մի բան,իսկ ազգային իրավական նորմերի

տեսակետից նաև ամուսնանալու համար ճանաչված մի միջոց: Փախցնելու ակտը կատարելուց հետո կայացած ամուսնությունը լիովին օրինական էր համարվում:Գնման միջոցով ամուսնության էությունը կայանում էր նրանում,որ տղամարդը իր կնոջը ձեռք էր բերում որոշ գումար վճարելով,որը կոչվում էր գլխագին:

Թեման ուսումնասիրելիս աշակերտները պետք է հասկանան,որ Հին Հայաստանում ոտնահարված են եղել կնոջ իրավունքներն ու ազատությունները,կինը հարկադրաբար զրկվել է արժանապատվորեն ապրելու իրավունքից:

Հին Հայաստանում քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից է «արյան վրեժը»: Վրեժի ակտը իրագործվում էր և բուն մեղավորի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ, երբեմն ամբողջ տոհմի նկատմամբ :

Թագավորի իշխանությունը Հին Հայաստանում,բացարձակ բռնապետություն էր: Արևելյան այդ յուրահատուկ բռնապետությունը բխում էր հողի սեփականության իրավունքից,որը պատկանում էր միայն պետությանը՝ հանձին այն գլխավորող միապետի: Թագավորը հենվելով իր բռնապետական իշխանության վրա և օգտվելով իր ինքնիշխան իրավունքից,ճանաչում էր իրեն որպես ամբողջ պետության հողերի կարգադրող և տնօրինող: Հարուստ և ուժեղ հողատեր-ստրկատերերը այս կամ այն ձևով փորձում էին յուրացնել համայական հողերը:Այս հարցի իրավական կարգավորումը տվեց Արտաշես 1 –ին Բարեպաշտը :Նա հրամայեց որոշել գյուղերի և ագարակների սահմանները և դրանք սահմանազատել սահմանաքարերով:Նա իր այդ հրաման խեղճ գյուղացուն պաշտպանեց հարուստ կալվածատերերից:Վերակազնեց գյուղացու՝ սեփական հայրենիքում հող ունենալու և արժանապատիվ ապրելու իրավունքը:

Այս արարքը քննարկելիս սովորողը պետք է իմանա քաղաքացիական հասարակության տարբեր խավերի իրավունքների հավասարության մասին, ինչպես նաև,որ լավագույն օրենքներն ուղղված են մարդկանց բարեկեցիկ ու արժանապատի կյանք ապահովելուն:

ԳԼՈՒԽ 2. Մարդու իրավունքների,ազատությունների, պատվի ու արժանապատվության գաղափարի ընկալումը քրիստոնեության ընդունումից հետո:

Քրիստոնեությունը մուտք գործելով Հայաստան սկսեց հալածել այն ամենն,ինչ հիշեցնում էր հեթանոսությունը:Իրավական նորմերի մշակման գործը իր վրա վերցրեց եկեղեցին:Ընտանեկան և կենցաղային սովորույթները քրիստոնեության սկզբունքներին համապատասխանեցնելուն էր ուղղված Աշտիշատի 354 թ և Շահապիվանի 444թ ժողովների ընդունած որոշումները:Արգելվեց արյունակիցների ամուսնությունը, բազմակնությունը,հանդերձներ պատռելով և ողբալով լացելը, պոռնկությունը,հարբեցողությունը:
Եկեղեցական իրավունքի մեջ կարևոր էին Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս.Պարթևի կանոնախմբերը:Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն ու Ս.Պարթևը ձեռնամուխ եղան հայկական դպրոցների բացմանը:Հիմնականում ստանում էին հոգևոր կրթություն, բայց դա լավ հիմք էր հետագայում աշխարհիկ կրթության:Կրթության հնարավորություն է ընձեռվում հասարակ ռամիկին նույնպես: Ամրապնդվում է հայ մարդու կրթական իրավունքը:Հայկական գրով կրթվելը նպաստում է հայրենիքի գաղափարի արժևորմանը:

4-ից 5րդ դդ-ում հայ զինվորականությունը որդեգրել ու քարոզում էր յուրօրինակ մի համակարգ ռազմիկի պատվո վարքականոն,որը ենթադրում էր ասպետական պատվի և արժանապատվության անբիծ պահպանում,հարկ եղած դեպքում նաև կյանքի գնով ,հավատարմության և անձնուրաց ծառայություն Հայաստան աշխարհին,երկրի բոլոր բնակիչներին անկախ սոցիալական ծագումից և դիրքից:Ավելի ուշ 13-րդ դդ Սյունիքի Եղեգիս քաղաքի մոտ կառուցվեց Զորաց տաճարը :Մարտի մեկնելուց առաջ Սիսական գնդերը այնտեղ հայրենիքը և հավատը պաշտպանելու պատվո երդում էին տալիս:

Սովորողը պետք է հասկանա ,որ ազատ և անկախ հայրենիքում ապրելը պատվի խնդիր Է,քանզի,անկախությունն ազգի ազատության արտահայտման ձևն է,նրա անժխտելի իրավունքը :

12-ՐԴ Դ-ում հայ իրավագիտությունը բուռն վերելք ապրեց:Մինադարյան հայ իրավական մտքի գլուխգործոցը Մ. Գոշի ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔՆ Է,որը կազմվել է 1184թ-ին:Դատաստանագիրքը սահմանադրության բարձրարժեք օրինակ է,որը կարգավորում էր իրավունքի բոլոր բնագավառները: Գոշն իր աշխատությունում շեշտը դնում է մարդ անհատի վրա,նրա աշխատության մեջ վառ արտահայտված մարդասիրությունը նույնպես նպաստում էր մարդու մեջ արժանապատվության և ինքնասիրության զարգացմանը: Այդ նպատակների հասնելու նպաստավոր վայրը իհարկե դպրոցն է:

Անձի իրավունքների պաշտպանությունը Գոշը դնում էր պետության վրա նպատակ ունենալով պահպանել հայ մարդու կերպարը՝որպես մեկ ժառանգություն:

Մինչ Գոշը բնական իրավունքի վերաբերյալ կային բազմաթիվ նկարագրություններ, սակայն Գոշը դրեց այն ավելի բարձր հարթության վրա և ձևակերպեց բնական իրավունքը՝որպես ի սկզբանէ աստծո կողմից ստացված ճշմարտություն,որը պետք է պահպանել և փոխանցել սերնդեսերունդ: Ըստ նրա,մարդուց է կախված արդարացի վարվելը և առաքինի լինելը, իսկ իրենց բնությամբ մարդիկ ազատ են և հավասար: Բնական իրավունքը արտահայտում է աստվածային արդարության,ազատության, հավասարության իրավունքները,որոնք հավերժ են,համամարդկային արժեքներ են և չեն ենթարկվում փոփոխությունների: Գիրք Դատաստանի»-ն,ելնելով սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքից,դատապարտության ենթակա է համարում ոչ թե վտանգավոր արարքը ընդհանրապես,այլ այն արարքը, որը կատարվել է մեղքով: Ըստ «Գիրք Դատաստանի»-ին անմեղսունակությունը նույնպես դատական պատասխանատվությունը բացառող հանգամանք է:

Եթե ամուսնությունը տեղի էր ունենում նրա կամքին հակառակ,ապա համարվում էր,որ կինը հարկադրվել է ամուսնության,և այդպիսի ամուսնությունը համարվում էր ստիպողական,ուստի կինը կարող էր ամուսնալուծվել:Ամուսնաընտանեկան հարաբերություններում Գոշը ելնում էր մենամուսնության սկզբունքից՝պատժելի համարելով երկկնությունն ու բազմակնությունը: Այնուամենայնիվ ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջը թույլատրվում էր ամուսնանալ երկրորդ,իսկ բացառիկ դեպքում նաև երրորդ անգամ:

Ըստ Դատաստանագրքի արգելվում էր բռնությունը կանանց նկատմամբ:

Մխիթար Գոշը եզակի խնդիր բարձրացրեց,գույքային իրավահավասարություն սահմանել տղամարդու և կնոջ միջև:

Կնոջն իրավունք էր վերապահվում ինքնուրույն տնօրինել իր գույքը: Նա կարող էր իր սեփականությունը կտակել ըստ իր հայեցողության: Երեխաները նրա ունեցվածքը ժառանգում էին անկախ հայրական ժառանգությունից: Նման մոտեցումը կնոջ նկատմամբ առաջադիմական քայլ էր այդ ժամանակաշրջանի համար:

Անդրադառնալով երեխաների ժառանգման իրավունքին՝ հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում հաշմանդամություն ունեցող երեխաների վրա: Նա առանձնացնում է հաշմանդամության երկու տեսակ՝մտավոր և ֆիզիկական: Առաջինները զրկված են բանականությունից և ի վիճակի չեն տնօրինել ժառանգությունը, հետևաբար չեն կարող լինել ժառանգորդներ: Գոշը գտնում էր,որ հոր մահից հետո գլխավոր տիտղոսը սովորութային ուժով անցնում է ավագ որդուն,իսկ ահա նրա մահվան կամ այլ պատճառներով,որ նա անհնար է,որ կարողանար իրականացնել իր պարտականությունները պետք է այն ժառանգեր երկրորդ որդին կամ հետ եկող ժառանգը: Մխիթարը գտնում էր,որ չի կարելի թափուր թողնել ժառանգական տիտղոսը, քանի որ այն կարող էր ողբալի հետևանքներ ունենալ պետության կամ իշխանության համար:

Մխիթար Գոշը գտնում է,որ պատիժը պետք է ունենա ոչ թե տանջանք պատճառելու և վրեժ լուծելու,այլ խրատելու,դաստիարակելու նպատակ:

«Գիրք Դատաստանին» ուշագրավ դրույթներ է արտահայտում նաև ամուսինների անձնական և գույքային հարաբերությունների կարգավորման բնագավառում: Տղամարդը տան գլուխն է,նրան են ենթարկվում ընտանիքի բոլոր անդամները,նաև՝կինը: Սակայն տղամարդու իշխանությունը բռնակալական կամ անկաշկանդ կամայական չէ: Ինչպես տղամարդու,այնպես և կնոջ իրավունքները զուգորդվում են ամուսնու և ընտանիքի մյուս անդամների նկատմամբ ունեցած որոշակի պարտականություններով: Ամուսինը պարտավորվում է հարգել կնոջը,նրա նկատմամբ լինել մարդկային,հոգալ նրա կարիքները,ապահովել նյութական բարեկեցությունը,հիվանդանալիս խնամել,պահանջել ամուսնական հավատարմություն: Կնոջը ծեծելու համար ամուսինը ենթակա է դատական պատասխանատվության: Մխիթար Գոշը կնոջ իրավունքների հարաբերական հավասարությունը պայմանավորում է գույքային հարաբերություններով:

Ամուսինների մինչամուսնական շրջանի գույքը նրանց առանձին,ամուսնության ընթացքում ձեռք բերածը՝համատեղ սեփականությունն է: Ամուսնանալու պահից կինն ուներ գույքայինն հենարան,որը ամուսնու հանդեպ և ընտանիքում կնոջ իրավունքների երաշխիքն էր:«Գիրք Դատաստանի»-ն բացառիկ կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի ներքին կյանքին վերաբերող տեղեկություններ հաղորդելու առումով:

Դատաստանագրքի ամենից կարևոր դրույթներից մեկը հենված Աստվածաշնչի վրա մարդկանց բնական հավասարության իրավունքն է: Մխիթար Գոշը մարդկանց անհավասարության փաստը բացատրում է սոցիալ-տնտեսական հարաբերություններով:

Գոշը, հակառակ իր դարաշրջանի գաղափարախոսությանը,մարդկանց սոցիալական անհավասարությունը հիմնավորում է տնտեսական պատճառներով:Գոշը նշում է,որ գյուղացիները կախման մեջ են ընկել,քանի որ կորցրել են իրենց ապահովող հիմնական միջոցը հողը: Հողային հարաբերությունների կարգավորման համար նա սահմանափակում է ավատատերերի իշխանությունը: Անհավասարության առաջացման պատճառի բացատրությունը և դա լուծելու անհրաժեշտության խնդրի բարձրացումը նորություն էր ողջ միջնադարի իրավական համակարգի համար:

Դատաստանագիրքը հայկական իրավա-քաղաքական մտքի և ընդհանրապես միջնադարի իրավական հուշարձանների շարքում խոշորագույններից է,ամփոփում է ժամանակի համար շատ առաջավոր դրույթներ,որոնք այժմեական են: Գոշն իր աշխատությունում շեշտը դնում է մարդ անհատի վրա,նրա աշխատության մեջ վառ արտահայտված մարդասիրությունը նույնպես նպաստում էր մարդու մեջ արժանապատվության և ինքնասիրության զարգացմանը: Այդ նպատակների հասնելու նպաստավոր վայրը իհարկե դպրոցն է:Դպրոցը ապագա մարդու և քաղաքացու դաբնոց է: Եվ ուրեմն,հենց դպրոցում պետք է ձևավորվի արժանապատվության և ինքնասիրության զգացում:

ԳԼՈՒԽ3.Հայերի իրավունքները հայկական գաղթօջախներում

Հայրենիքում կրած զրկանքների պատճառով հայ ժողովուրդը արտագաղթեց՝ բնակություն հաստատելով աշխարհի տարբեր երկրներում: Ձևավորվեցին հայկական գաղթավայրերը: Հայ ժողովուրդը,ապրելով օտար ափերում,մշտապես պայքարել է պատվով և արժանապատիվ ապրելու համար:Կարողացել է պահպանել հայատառ կրթական իրավունքը:Հայկական գաղութները օտար միջավայրում պահպանել են ազգային սովորություններն ու բարքերը,հայկական մշակույթը:Նրանք սովորաբար պահպանել են մայրենի լեզուն,հայրենի դավանանքը, ազգային ավանդույթներն ու դիմագիծը :

Ռումինիայում հայաշատ կարևոր կենտրոններն ունեին իրենց ինքնավարությունը՝ քաղաքային խորհուրդները: Դատավարությունը կատարվում էր ազգային ավանդույթներով: Տվյալ համայնքում հիմնել են սեփական դպրոց ու եկեղեցի : Հայ համայնքներն ստացել են դավանանքի ազատություն և տնտեսական ազատ գործունեության իրավունք: Դատավարությունը տարվում էր սեփական օրենքներով, լեհահայերի դատաստանագրքով,որը կազմված էր հայկական օրենսդրության հիման վրա:Հայկական մյուս գաղութների դատարանը գլխավորում էր քաղաքագլուխը:Կառուցել էին եկեղեցիներ,տաճարներ: Նրանք ունեցել են ազգային դպրոցներ: Այստեղ ևս հայերն օգտվում էին դավանանքի ազատությունից :Ամենախոշոր և կարևոր գաղթօջախը գտնվում էր Վենետիկում,ուր ժամանող հայ վաճառականներն ունեին իրենց կենտրոնատեղին,որը կոչվում էր Հայոց տուն: Այն փողոցը,որտեղ գտնվել է «Հայոց տունը», կոչվել է Հայոց փողոց: «Հայոց տունը» հետագայում ընդարձակվում է: Հայաստանում օտար նվաճողների մղած պատերազմները և նրանց երկարատև տիրապետության հաստատումն ահավոր հարված հասցրին հայկական մշակույթին հոգևոր և աշխարհիկ կյանքին:Նախորդ դարերի մշակութային

աշխույժ կյանքը գրեթե ամենուրեք անկում ապրեց,դադարեցին գործելուց բազմաթիվ դպրոցներ:

Գաղթօջախներում հայերեը օգտվում էին սեփականության իրավունքից:Ամստերդամում XVII դ. սկզբներից հիմնվում են առևտրական տներ,և ձևավորվում է հայկական համայնքը: Այստեղ որոշ հայ առևտրականներ ունեցել են իրենց սեփական նավերը: 1653թ. Ամստերդամից դեպի Զմյուռնիա ճանապարհված հինգ նավերից երկուսը հայկական էին: Նորաբնակները մի շարք արտոնություններ ստացան: Գաղութն ուներ ինքնավարություն, որը տնօրինում էր քաղաքագլուխը: Դատական գործերը վարում էր քաղաքագլխի տեղակալը: Հայերն օգտվում էին նաև դավանանքի ազատությունից, կառուցում եկեղեցիներ ու վանքեր: Նոր Ջուղայում պահպանվել են հայկական մշակույթի լավագույն ավանդույթները: Այնտեղ բացվել են լայն գիտելիքներ տվող դպրոցներ: Քաղաքի Ամենափրկիչ վանքում հիմնվել է մատենադարան,ուր հավաքվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ :

Հնդկահայ գաղութներում Հովսեփ Էմինի,Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի կողմից ու ջանքերով լույս տեսած <<Որոգայթ Փառաց>> գիրքը ոչ միայն ապագայում Հայաստանի սահմանադրությունն էր,նաև սեփական երկրում արժանապատիվ ապրելու հնարավորություն: Նախագծով նախատեսվում էր հռչակել բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև,նրանց անձի, խոսքի,դավանանքի և գործունեության լիակատար ազատությունը: Հայոց պատմության դասաժամերին անհրաժեշտ է նմանօրինակ թեմաների վրա շեշտադրել, դաստիարակել աշակերտի մոտ սեփական պատմության նկատմամաբ հարգանք և սեր: Հայոց պատմություն,Գրականություն, Հայոց լեզու և Աշխարհագրություն առարկաների դասաժամերը լավագույն հնարավորությունն են տալիս ազգային արժեհամակարգի ստեղծման,ազգային ինքնագիտակցության բարձրացման համար: Պատահական չէր,որ ցարական կառավարության կողմից դպրոցներում հենց այդ առանրկաներն էին թիրախավորվում: Պարբերաբար արգելվում էին դասավանդել հենց այս առարկաները:

Նմանատիպ թեմաներ ուսումնասիրելիս,աշկերտը պետք է հասկանա ,որ հայ ազգի ոգին անկոտրուն է,իսկ արձակած ծիլերը՝ամենուր :Թշնամին բազմից փորձել է մեզ զրկել հայրենիքից,բայց բարոյազրկել մեզ՝երբեք չի

հաջողվել:Անգամ,գտնվելով օտար ափերում,կարողացել ենք խորը արմատներ ձգել, ծլել ,ծաղկել ,բարգավաճել:

ԳԼՈՒԽ4.Մարդու իրավունքների,ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը Հայաստանում 1918թ-ից միջև մեր օրերը :

Յուրաքանչյուր ազգի անքակտելի իրավունքն է սեփական հայրենիքում ապրել ազատ և անկախ :Հայ ժողովուրդը դարերով պայքարել է այդ իրավունքի համար:Այդ պայքարի արդյունքում հայ ժողովրդի համար դժվարին պայմաններում 1918թ.մայիսի 28-ին ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը շեշտում էր,որ հայ ազգը իր հայրենիքում արժանապատիվ ապրելու համար պետք է հենվի միայն ու միայն իր ուժերի վրա :Ձևավորված կառավարության նպատակներից մեկը նոր օրենսդրության մշակումն էր՝ժամանակի պահանջներին համապատասխան:Ընդունվեցին մեր անկախությունն ամրապնդող պետական խորհրդանիշները՝դրոշը,զինանշանը և օրհներգը:Ձևավորվեց դատական համակարգը,ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարանը,որը նոր թռիչք էր հայ իրավունքի ոլորտում:

1919.-ԻՆ ընդունվեց պետական լեզվի մասին օրենքը,որով հայերենը հռչակվեց պետական լեզու:Այդ օրենքով ամրապնդվեց հայրենիքում մայր լեզվով խոսելու և հայատառ գրելու իրավունքը:

Հայաստանի առաջին հանրապետությունն իր ընտրական համակարգով ժամանակի ամենաառաջադիմականներից էր:Շատ քիչ պետություններում էր այդ պահին ներդրված համընդհանուր ընտրական իրավունքը: Ընտրելու և ընտրվելու իրավունք ստացան նաև կանայք:

Առաջին հանրապետության կարևոր ձեռքբերումը հայակական բանակի ստեղծում էր,քանզի հայկական բանակն է մեր լինելիության,սեփական հայրենիքում ազատ և արժանապատիվ ապրելու գրավականը: ՀՀ –ը կայացած պետականություն էր ոչ միայն պետական իշխանության մարմինների,հայոց բանակի,այլև միջազգային իրավունքի տեսանկյունից:

1920թ-ի դեկտեմբերին Հայաստանը հայտարարվեց սոցիալիստական խորհրդային անկախ Հանրապետություն:Ազգային կուսակցությունները դուրս մղվեցին քաղաքական դաշտից:Հաստատվեց կոմունիստական կուսակցության միանձնյա վարչակարգը: Անդառնալի հարված հասցվեց հայ հասարակական,քաղաքական և մշակութային կյանքին:

Խորհրդային շրջանում հատկապես տուժեց հայ գրականություն և հայոց պատմություն առարկան: Ամեն գնով կեղծելով ու խեղաթյուրելով մեր պատմությունը սովորողի մոտ իջեցվում էր ազգային արժանապատվության նշաձողը:

Բռնաճնշումներից զերծ չմնաց նաև հայկական եկեղեցին և հոգևորականությունը,քանզի եկեղեցին էր հանդիսանում հայ Ժողովրդին համախմբող ուժը,ազատության ջատագովը:1937 թ-ին ընդունված Սահմանադրությունն ամրագրեց միակուսակցական վարչակարգի իշխանությունը :Դա զրկեց անհատին ընտրական իրավունքից:Հասարակության ազատ ապրել,սեփական կամքը արտահայտելը դարձավ անհնար:

1945թ-ին Ազգերի լիգայի հիմքի վրա ստեղծվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունը (ՄԱԿ),որն էլ 1948թ դեկտեմբերի 10-ին ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:Այն հայտարարում է,որ մարդկային ընտանիքի բոլոր անդամների բնական արժանապատվության, հավասար և անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության,արդարության և խաղաղության հիմքն է աշխարհում:

Սովորողը պետք է ընկալի,որ հռչակագիրը համընդհանուր բնույթ ունի,այն տարածվում է բոլորի վրա՝անկախ մարդու մաշկի գույնից,սեռից,լեզվից,կրոնից, քաղաքական համոզմունքներից, ազգային և սոցիալական ծագումից, գույքային ու դասային դրությունից:

Աշակերտներին անհրաժեշտ է ներկայացնել նաև մարդու իրավունքների մասին միջազգային բիլը: Քանի որ հռչակագիրը պարտադիր ուժ չուներ պետությունների համար,ուստի ՄԱԿ-ը սկսեց աշխատանք տանել տարբեր երկրների պետական կառույցների հետ՝հռչակագրում ամրագրված դրույթներին պարտադիր ուժ տալու համար: Տևական աշխատանքներից հետո 1966թ ՄԱԿ-ն ընդունեց երկու միջազգային

փաստաթուղթ՝քաղաքացիական և Քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Այս փաստաթղթերը կոչված են խրախուսելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքը,դրանց պահպանումն ու պաշտպանությունը: Այս երկու փաստաթղթերը միասին կազմում են մարդու իրավունքների միջազգային բիլը:

1991 թ.հայ ժողովրդի բաղձալի երազանքը դարձավ իրականություն՝հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը: Անկախության վերականգնումը հույս արթնացրեց կորսյալ հայկական հողերի վերադարձման համար,հայոց բանակն ու կամավորական զինված ուժերը կարողացան փառավոր հաղթանակ տանել Ադրբեջանի նկատմամբ՝վերականգնելով հայրենիքում ազատ և արժանապատիվ ապրելու իրավունքը:Հայաստանի անկախության վերականգնմամբ անխուսափելի դարձավ նոր՝ ազգային սահմանադրության ընդունումը: Սահմանադրությունն ընդունվեց 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով:

Աշակերտը պետք է հասկանա՝մարդը լույսաշխարհ է գալիս որպես ազատ էակ և ձեռք է բերում բնական իրավունքներ: Ոչ մի պետություն <<չի նվիրում>> իրավունքներ և չի կարող նրանից խլել դրանք: Հետևաբար մարդու բնական իրավունքներն ու ազատությունները հասարակական կյանքում ունեն հիմնարար նշանակություն:

<< Սահմանադրությունը հռչակում է մարդու հիմնական իրավունքները և ազատությունները,ինչպես նաև պարտականությունները՝հիմք ընդունելով միջազգային իրավունքի սկզբնաղբյուրներն ու նորմերը:

Սահմանադրությունն ամրագրեց Հայաստանի Հանրապետության բնույթը՝որպես ինքնիշխան,ժողովրդավարական,իրավական և սոցիալական պետության,հռչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

ՀՀ Սահմանադրության մեջ,ամրագրված էերեխայի կրթության իրավունքը,որով երեխան պաշտպանված է ֆիզիկական և հոգեբանական բռնություններից օրենքի ուժով: :

Հոդված 11.Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու,իր,ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական հաստատություն ընտրելու իրավունքը:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման,տաղանդի,մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝հիմնելով հանրակրթական,մասնագիտական դպրոցներ,մարզական,տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման,նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր երեխա ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի կրթության և մասնագիտական պատրաստության համար անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրման մատչելիություն:

Այսօր երեխայի արժանապտվության իրավունքը նույնպես ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է,բարձրագույն և առանցքային արժեք,մարդու անքակտելի և անօտարելի իրավունք,որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է,որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է,որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝առանձին և այլ իրավունքների համատեքստում :

Հոդված 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական,ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական,ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ,ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:Սույն իրավունքը մարդուն հնարավորություն է տալիս արժանապատիվ կյանքի և աշխատանքի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը,չունենալով բավականաչափ գիտելիքներ,չի կարող հարկ եղած դեպքում հանդես գալ իր իրավունքների պաշտպանությամբ:Ուստի պետությունը պետք է երաշխավորի երեխաների իրավունքների պաշտպանությունը նրանց առնչվող բոլոր գործողություններում,որում առաջնային պետք է լինի երեխայի շահը:Հայոց պատմության դասաժամին մեծ ուշադրություն պետք է դարձվի ազգային մտածողության, ինքնասիրության և արժանապատվության վրա:Պետք է բարձրաձայնել այնպիսի խնդիրներ,որոնք վնասում են աշակերտի մոտ ինքանսիրությանը,պատիվն ու արժանապատվությանը:Պետք է թույլ տալ աշարկերտին արտահայտել սեփական տեսակետը, ինքնուրույն առաջարկել խնդիրներին վերաբերող սեփական լուծումները: Հայոց պատմության ժամերին է,որ սովորողի մոտ ձևավորվում է ազգային ինքասիրություն և ազգային գաղափարախոսություն: Դպրոցն իր առջև պետք է խնդիր դնի, առավելագույս ստեղծել պայմաններ սովորողի պատվի ու արժանապատվության պաշտպանությանն ուղղված:Արժանապատվությունը և ինքնասիրությունը պաշտպանված աշակերտների գերկշռող մասը ապագայում կդառնա լավ մարդ և արժանավոր քաղաքացի,հայրենիքի իրական նվիրյալ և ջատագով:Վերոնշյալից գալիս ենք եզրակացության,որ պետք է լուրջ վերաբերվել այս խնդրին,կարևորել աշակերտի ինքնասիրության և արժանապատվության պաշտպանությունը դպրոցում,որպեսզի ունենանք առողջ հոգով և բանականությամբ քաղաքացիներ:

Դպրոցում հայոց պատմության դասաժամը պետք է ողղուրդված լինի արժանապատիվ քաղաքացու կերտմանը:Աշակերտը պետք է կարողանա ունենա սեփական կարծիք և այդ կարծիքը արտահայտելու ազատություն և հնարավորություն:

Գրականության ցանկ

1. Արա Ասլանյան «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն » « Վան Արյան»Երևան 2009-16
2. Ա. Ղուկասյան ,Ա. Գյուլբուդաշյան 6-7 –րդ դասարանների Հայոց պատմության ուսուցչի ձեռնարկ Երևան 2013
3. Է. Գևորգյան,Կարեն Խաչատրյան ,Ամատունի Վիրաբյան Հայոց պատմություն 9 –րդ դասարան Երևան 2019
4. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 1948 թ. Փարիզ
5. ՀՀ Սահմանադրություն Երեվան 1995 թ